ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
(ՀԱՅԱՍՏԱՆ, ԳՅՈՒՄՐԻ, Լ.ՄԱԴՈՅԱՆ 130/1)

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"
NON-GOVERNMENTAL ORGANIZATION
(MADOYAN STREET 130/1, GYUMRI, ARMENIA)
Email: animkrt@yandex.com http://www.asparez.am
http://www.publicdata.am

ՀՀ Լոռու մարզպետ Արամ Ղազարյանին

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի լրագրող, ՀՀ քաղաքացի Անի Մկրտչյանից

Հասցե. Հայաստան, Գյումրի, Լ.Մադոյան 130/1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ-11/2024

Փետրվարի 16, 2024 թվական

Առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով՝ խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Լոռու մարզպետի աշխատակազմի Իրավական ակտեր բաժնի Մարզպետի որոշումներ ենթաբաժնում հրապարակված են դրամական աջակցություն ստացող քաղաքացիների ցուցակները: Այդ ցուցակներում հրապարակված են միայն դրամական օգնություն ստացած քաղաքացիների հաշվառման վայրերը՝ համայնքները: Հնարավո՞ր է արդյոք այսուհետ դրամական աջակցություն ստացող քաղաքացիների ոչ միայն հաշվառման վայրերը, այլեւ՝ հաշվառման հասցեները հրապարակեք: Եթե հնարավոր չէ հրապարակել դրամական աջակցություն ստացող քաղաքացիների հաշվառման հասցեները, խնդրում եմ նշել պատճառը/պատճառները:

Օրինակ, Շիրակի մարզպետի աշխատակազմը հրապարակում է դրամական աջակցություն ստացող քաղաքացիների հաշվառման հասցեները:

Հնարավորության դեպքերում խնդրում եմ տեղեկությունները տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով իմ animkrt@yandex.ru հասցեին:

Հարցման հեղինակ՝ Անի Մկրտչյան